թեան խմբին մէջ ամենէն մեծն է՝ Կուկ 150,000—200,000 հոգի հաշուեց, մինչդեռ այժմ 15,000էն աւելի չեն: «Տայիտեան Տարեգիր»ի հաշուով 1863ին Տայիտայ եւ Մաուրաւայ կղզիներին մէջ միայն 7,642 բնիկ կային. բայց երբ 1849ին՝ տեղական գաղղիական իշխանութիւնն աշխարհագիր արաւ՝ բնակիչներն այժմեանէն բաւական աւելի էին, այսինքն 8,082ի կհասնէին: Այս գեղեցիկ եւ զօրաւոր ցեղին այսպիսի վիճակին աւելի սոսկալի կերեւի, որ քրիստոնէութեան այստեղ մտնելը գրաւական կհամարուէր նորա բարոյական եւ հասարակական յառաջադիմութեան յաջողութեանը: Բրիտանական նաւատորմիղի բժիշկը Կաուլտէր, որ 1836ին այցելեց «Ընկերութեան» կղզիները, տեսաւ որ որդեսպանութիւն, մարդազոհ եւ անբարոյութիւն բոլորովին դադարած են. միայն ծովեզերեայ տեղերում, ուր եւրոպայի եւ ամերիկայի նաւերը կերթեւեկեն՝ անառակութիւնը կտիրապետէր:

(Շարունակելի) Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ.

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Այս օրերս լոյս տեսաւ Տփխիսում Պ. Ն. Խօսրովեան խմբագրութեամբ հրատարակուող ՎԱՐԺԱՐԱՆ մանկավարժական ամսաթերթը Օգոստ. եւ Սեպտ. համարները միասին: Վարժարանի թէ՛ տպագրութիւնը մաքուր է եւ թէ՛ գիրքը գեղեցիկ. իսկ նորա նպատակայարմար յօդուածները արժանի են ամենայն համակրութեան եւ ուշադրութեան: Մանաւանդ թէ նորա Մեծ. Հրատարակչի եւ նորա աշխատակիցների վկայեալ անձնական եւ ուսումնական արժանիքները բաւական են երաշխաւորել այն մեծամեծ ծառայութեանցը, զորս կարող է եւ խոստանում է մատուցանել Վարժարանը հայկական ուսումնարանական գործերին: Վստահօրէն հաւատացած ենք թէ՛ մեր սիրելի Ազգայինները ամենայն ուրախութեամբ եւ յարգանօք ողջունելով Վարժարանը—այս բազմաշահ մանկագիտական ամսաթերթի ի լոյս ընծայումը՝ քաղցր համակրութեամբ կընդունեն եւ չեն խնայիլ նորան իւրեանց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը:

***

Խմբագրութիւնս մեծաւ շնորհակալութեամբ ստացաւ Մոսկուայից ԾՐԱԳԻՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ: Թէ լեզուի եւ թէ կրօնի Ծրագիրը բաւական ընդարձակ է. մեծ յաջողութիւն ու աշխատանք է հարկաւոր ուսուցչաց եւ ուսանողաց կողմից մի այդպիսի մեծ եւ բազմաբովանդակ ծրագիր անցնելու համար. այնու ամենայնիւ ցանկալի եւ անհրաժեշտ էր Լազարեան ճեմարանի դասական առարկայից ընդհանուր Ծրագրի մէջ ունենալ եւ Հայկական լեզուի եւ Կրօնի մի այդպիսի որոշեալ ծրագիր, մանաւանդ եթէ լինէր դա պաշտօնապէս վաւերացուցեալ:

---

Քութայիսու շրջակայներում գտնուող Չխար գեղջ ծխական նորընծայ քահանայ Եղիշէ Քարամաճեանց հաղորդած է հետագայ տեղեկութիւնքը, զորս ուրախութեամբ հրատարակելով չենք կարող յատուկ շնորհակալութիւն չյայտնել Պ. Մելիք Հայկազեանց Աղեքսանդրին ուսումնասիրական բարեջան արդեանց համար:

«Ուրախութեամբ սրտի կը փութամ յայտնել որ գիւղիս Հայկական նախակրթարանը, այժմ բոլորովին ապահով դրութեան մէջ հաստատուեցաւ.

Ներկայ տարւոյս մինչեւ օգոստոս ցվերջն, համարեա իմ հաշւովս կը մատակարարուէր լիովին, իսկ անցեալ սեպտեմբեր ամսոյ սկիզբէն, գնդապետ Պ. Աղէքսանդր Մէլիք Հայկազեանց, իմ խնդրանացս համեմատ, Վարժարանիս ամբողջ ծախքն և հոգն ինքն ստանձնելով, և արդէն աշակերտաց բոլոր պիտոյքը ուղարկեց Թուականէս հինգ օր յառաջ.

Ահաւասիկ ուղարկած նիւթերն.

| | |
|---|---|
| Հարիւր օրինակ ընթերցարան Աղայեանցի . . . . | 100 |
| Վաթսուն հատ մեծագիր քարետախտակ . . . . | 60 |
| Հինգ դուժին մատիտ, երկու տեսակ . . . . . | 5 |
| Երկու թօփ թուղթ, հասարակ և փոշթի . . . . | 2 |
| Երկու տետրակ հաշուապահութեան, մեծ և փոքր . . | 2 |
| Երկու կազմ գծագրութեան օրինակներ . . . . | 2 |
| Մի տուփ գրիչ գրչակալներով . . . . . | 1 |
| Երկու կազմ մանկական խաղալիք (լօտօ) . . . | 2 |
| Մի գրչահատ ընտիր տեսակէն . . . . . | 1 |
| Մի քօմէլաստիկ և գոյնզգոյն մատիտներ գծագրութեան . | 1 |
| Մի տետր գեղագրութեան, որ դարձեալ պիտի ուղարկէ իւրաքանչիւր աշակերտաց համար. . . . . . | 1 |

Մի կազմ Թանաքաման և աւազաման, որ դարձեալ պիտի ուղարկէ իւրաքանչիւր աշակերտաց համար . . . . 1

Երկու շիշ Թանաք . . . . . . . 2

Մի ընդարձակ երգարան, Քնար Հայկական . . . . 1

որ դարձեալ յիսուն հատ համառօտ երգարան պիտի ուղարկէ։

Մի Թօփ մահուտ, զգեստեղինաց համար . . . . 1

դարձեալ աղքատիկ աշակերտաց մուճակներ շինել տալու համար քառասուն կտոր կաշիներ . . . . . . . 40

Տասն և չորս Թօփ շպալէր, վարժարանիս համար . . . 14

Երկու սաժէն վառելափայտի գին, քսան եւ ութն ռուբլի . 2

Մի ձուլածոյ ջերմոց . , . . . . . 1

Մի պահարան, աշակերտաց գործիքները պահելու համար . 1

Հինգ ժամագիրք . . . . . . . . 5

Բաց յայսցանէ, պ. Ալէքսանդր Մէլիք Հայկազեանց մի ուսուցիչ (Կարապետ Սուքիասեանց) ուղարկեց, և նորա ամսական ռոճիկները, մինչև յառաջիկայ դեկտեմբեր ամսոյ վերջն կանխիկ վճարեց վաթսուն րուբլի . . . . . . . 60

Եւ յառաջիկայ յունվար ամսոյ սկիզբէն, մի օրինակ «Մեղու Հայաստանի» և մի օրինակ «Մշակ» լրագիրները պիտի նուիրէ վարժարանիս աշակերտաց։

Վարժարանիս յարկին անձկութեան պատճառաւ, հիմակու հիմա 48 աշակերտք ընդունած եմք, որոց քսան և հինգը (25) տղայ և քսան երեքը (23) օրիորդ են։ Յառաջիկայ գարնան վարժարանս ընդարձակ պիտի շինուի։

Պ. Ալէքսանդր Մէլիք Հայկազեանց գիւղիս ս. Աստուածածնայ եկեղեցւոյն շինութեանը համար երկու տակառ եւ փառօդ շնորհեց, որովհետև մի քանի ազգասէր անձանց քաջալերութեամբը, անցեալ հոկտեմբեր ամսոյ սկիզբէն եկեղեցւոյս շինութեան ձեռնարկեցինք, և բացի եկեղեցապատկան երեք հազար վաթսուն (3060) ռուբլի գումարէն, ժողովրդականք մի քարոզութեամբ, անմիջապէս երկու հազար (2000) ռուբլի ստորագրեցին։ Եկեղեցւոյս շինութեան բոլոր ծախքը, ութն հազար եօթն հարիւր (8700) ռուբլի արծաթոյ պիտի յանգի, թէպէտև առանց գմբէթի, բայց սրբատաշ պիտի լինի։»

ԵՂԻՇԷ ՔԱՀԱՆԱՅ ՔԱՓԱՄԱՃԵԱՆՑ.

Ազգիս Վեհափառ Հայրապետի նախընթաց կարգադրութեամբ Մայր Աթոռոյս ժառանգաւորաց Դպրոցը ներկայ $18^{82}/_{83}$ ուսումնական տարւոյ սկզբից միացաւ Գէորգեան Ճեմարանի հետ. եւ նորա փոխանակ բացուեցան երեք բաժանմունք նա-

*խապատրաստականի, որոց մէջ դասախօսողներ կլինին ճեմարանի Երրորդ Լսարանի ուսանողք առաջնորդութեամբ մանկավարժ Պ. Սեդրակ Մանդինեանցի:*

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ

### ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԳԱՆՁԱԿԱՑ ԱՂՔԱՏԱՑ ԽՆԱՄԱՐԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1876 ԹՈՒԻՑ ՄԻՆՉԵՒ 1882 ԹՈՒԻՆ:

Գանձակ 27-ն Փետրուարի 1882 ամի

| ՄՈՒՏՔ. | 1876 թուից ց 1881 թուի Յունիսի 7 | | 1881 թուից ստացուած անդամակցութեան վճարներ | | 1881 թուում ստացուած անդամակցի վճար 1882 թ. համար | | Ամբողջ ստացուած | | Ստացուելու պակաս | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. | Ր. | Կ. |
| *Ընկերութիւնը ունեցել է ի սկզբանէ անտի ցվերջ 1881 ամի հիմնադիր անդամներ տասը, որոց անդամական վճարը հասնումէ 3350 րուբ. այս գումարից ստացուած է.* | 950 | | 150 | | | | 1100 | | 2250 | |
| *Անփոփոխ անդամներ 11, որոց անդամական վճարի գումարը հասնումէ 550 րուբ. այս գումարից ստացուած է.* | | | 130 | | | | 130 | | 420 | |
| *Տարեկան անդամներ 75 որոց անդամական վճարը հասնումէ 242 րուբ. և 1881 թուականում ստացուած է 1882 թուականի համար անդամական վճար 102 րուբ. ամէնն 344 ր. այս գումարից ստացուած է.* | 23 | | 134 | | 102 | | 259 | | 85 | |
| *Տոկոս դրամոց 1016 րուբ. 20 կ. որի մէջ հաշուած է 1882 թուի 1400 րուբլու հինգ ամսուայ տոկոսն.* | | | 1016 | 20 | | | 1016 | 20 | | |
| *Միանուագ նուիրատուութիւն թէ բանւոր կտակներով և թէ ի յիշատակ ննջեցելոց իւրեանց.* | 693 | 30 | 11 | | | | 704 | 30 | | |
| *Կառքի (բալտախինի) վարձ.* | 31 | | 27 | | | | 58 | | | |
| *Գանձանակադրամ.* | | | 59 | 10 | | | 59 | 10 | | |
| *Ընդամէնն է* | | | | | | | 3326 | 60 | 2755 | |